

Լուսաւորչի տոհմի հետ, իսկ այդ տոհմին, սեփական գինաստիայի տեսակէտից, ձեռնուու էր պահպանել Արշակունիների տոհմը թագաւորական զահի վրայ, Ներսէս Մեծի պատմութիւնը այս բանը հաստատում է առատ փաստերով: — Ներսէսի ժամանակ պարսկասէր կուսակցութիւնը Մեհրուժան առաջացրեց, իսկ երբ Սահակը վերջնականապէս հաստատեց Հայաստանում յունական ազգեցութիւնը կրթութեան միջոցով, նոյն պարսկական կուսակցութիւնը տապալեց Արշակունիների դահը և առաջ բերեց մի շարժում, որի գլուխն էր Վասակ Սիւնեցին:

L.

17) ՀԵՆՐԻՔՑԱ, ՎԻՏՈՅՑ, ԹԱՐԱՎԻ ԹԱՐԱՎԻ. օր. 7, 8-ն, ԹԻՖԼԻՍ, 1902 թ., զին է 12 կոպէկ:

Մեզանում լաւ մանկական գրքեր այնքան քիչ են, որ նըրանց մատով կարելի է համարել: Զուտ մանկական գրողներ համարեա չունենք, եղածներն էլ շատ քիչ բան են արտադրել: Այդ է պատճառը, որ մեր մանկական գրականութեան մէջ շատ-քիչ յայտնի գրքոյները թարգմանական են:

Մանուկի հասկացողութեան յարմար, հետաքրքրական ձեւով գրած և միաժամանակ լաւ բարոյական ազգեցութիւն թող-նող գրքոյներից մէկը մնաւուշտ լինելու է և «Թմիլիկը»: Այդ գրքոյնի հերոս՝ Փոքրիկ Օննիկի ալտորուխատական քայլը պատ-մուած է այնքան գրաւիչ և մանկական հասկացողութեան մատ-չելի ձեւով, որ անկասկած «Թմիլիկը» մանուկննրի սիրած գըր-քերից մէկն է դառնալու:

Գրքոյնը պատկերագրադ է. այդ էլ նրա գրաւիչ կող-մերից մէկն է: Գինը շատ մատչելի է: Ափսոս որ գրքի սրբա-գրութիւնը չափաղանց անփոյթ կերպով է կատարաւած: Մա-նուկների ընթերդանութեան համար յատկացրած գրքոյներում կարելի չէ թողնել այդքան սրբագրական միաներ: Լաւ կը լի-նէր մանկական գրքերը աւելի խոշոր տառերով տպագրել:

L. U.